ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2024թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար)





2024թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 146.1 մլրդ դրամ, ինչը 6.8 մլրդ դրամով կամ 4.4%-ով պակաս է 2023թ. և 84.5 մլրդ դրամով կամ 137.2%-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 132.8 մլրդ դրամ, ինչը 47.3 մլրդ դրամով կամ 55.3 %-ով ավել է 2023թ. և 90.7 մլրդ դրամով կամ 215.4 %-ով ավել է 2022 թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 13.3 մլրդ դրամ, ինչը 54.1 մլրդ դրամով կամ 80.3 %-ով պակաս է 2023թ. և 6.2 մլրդ դրամով կամ 31.8 %-ով պակաս է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

2024թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 360.7 մլն դոլար, ինչը 25.4 մլն դոլարով կամ 6.6%-ով պակաս է 2023 թ. և 232.8 մլն դոլարով կամ 182 %-ով ավել է 2023թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 327.9 մլն դոլար, ինչը 112.0 մլն դոլարով կամ 51.9 %-ով ավել է 2023թ. և 240.5 մլն դոլարով կամ 275.2%-ով ավել է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2024թ. հունվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 32.8 մլն դոլար, ինչը 137.4 մլն դոլարով կամ 275.2%-ով պակաս է 2023թ. և 7.7 մլն դոլարով կամ 19 %-ով պակաս է 2022թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**